Հայտարարություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի վարչական շենքում 2025թվականի փետրվարի 21-ին ժամը 15:00-ին տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցի օտարում՝ աճուրդ-վաճառքի միջոցով, դասական եղանակով՝

1. 1լոտ VAZ21214-147-20 մակնիշի (301 US 35) թեթև մարդատար ավտոմեքենա, թափքը՝ ունիվերսալ, գույնը՝ սպիտակ, թողարկման տարեթիվը՝ 2010թ., նույնականացման համար-XTA212140B1982402, փոխանցման տուփը՝ մեխանիկական, վազքը՝ 530946կմ, վառելիք՝ բենզին, գազ։

Վիճակը՝ սարքին, հիմնական հանգույցների բնականոն մաշվածքով, ընթացքային մասը նորոգման կարիք ունի, շարժիչը վերանորոգման կարիք ունի (արտանետված գազերում առկա են վառված յուղին բնորոշ մուգ գույն)։ Անիվները կիսամաշ, մարտկոցը ոչ պիտանի օգտագործման համար լիցքաթափված: Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են փոքր դեֆորմացված հատվածներ, վնասված տեղեր, կոռոզիայից քայքայված հատվածներ: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը՝ բավարար: Մեքենայի տեխնիկական վիճակի գնահատականը՝ միջին: Սալոնը կտորապատ, նստատեղերը պատառոտված հատվածներով, ընդհանուր վիճակի գնահատականը՝ բավարար:

Մեկնարկային գինը՝ 850000 (ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ։

2. 1լոտ ГАЗ 3110 մակնիշի (257 US 35) թեթև մարդատար ավտոմեքենա, թափքը՝ սեդան, գույնը՝ սև, թողարկման տարեթիվը՝ 1998թ., նույնականացման համար-XTH311000W0099223, փոխանցման տուփը՝ մեխանիկական, վազքը՝ ցուցիչի տվյալ՝ դիտարկել հնարավոր չի եղել, վառելիք՝ բենզին։

Վիճակը՝ մասնակի անսարք, հիմնական հանգույցները գերմաշված են, ընթացքային մասը գերմաշված է։ Անիվները մաշված, մարտկոցը բացակայում է։ Հետևի և դիմացի լուսարձակների մի մասը կոտրված, դիմապակին՝ ճաքերով: Մեքենայի իրանի արտաքին մակերևույթի վրա առկա են ներկի ծածկույթի էական վնասված հատվածներ, մետաղական իրանի փոքր դեֆորմացված հատվածներ, վնասված տեղեր, կոռոզիայից քայքայված հատվածներ: Իրանի դետալների եռակցման որոշ հատվածներում նկատվում է կոռոզիայից քայքայված տեղամասեր: Արտաքին տեսքի վիճակի ընդհանուր գնահատականը՝ բավարար: Մեքենայի տեխնիկական վիճակի գնահատականը՝ բավարար: Արտաքին տեսքի վիճակի գնահատականը՝ վատ: Սալոնը կտորապատ, պատառոտված տեղամասերով, ընդհանուր վիճակի գնահատականը՝ վատ:

Մեկնարկային գինը՝ 180000 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ։

Նախավճարը՝ մեկնարկային գնի 50%-ի չափով։Աճուրդային քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով։ Սահմանափակումներ չկան։ Աճուրդում հաղթող կհամարվի առավելագույն գին առաջարկած մասնակիցը։ Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդային հանձնաժողովին պետք է ներկայացնեն՝ աճուրդին մասնակցության հայտը, անձնագիրը,

մուծված նախավճարի անդորագիրը։ Հայտերն ընդունվում են ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 9:00-18:00։ Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում են աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ։ Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Վարդենիս Հ. Անդրեասյան 4։ Աճուրդային հանձնաժողով։ Հեռ.(0269)22031